

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15.04.2016 10:23



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում կազմակերպվել էր երկօրյա վերապատրաստման դասընթաց «Արդյունավետ հաղորդակցման հմտություններ» թեմայով: Դասընթացը վարել է տ.գ.թ., դոցենտ Դանիել Զհանգիրյանը: Դասընթացի ընթացքում մասնակիցները քննարկել են սուտը բացահայտելու կարողությունների տեսական և տարածված եղանակները: Անդրադարձել են զրուցակցի վստահությունը նվաճելու հմտություններին, դրանց կիրառման յուրահատկություններին: Դասընթացավարը մանրամասնել է զրուցակցի վրա ներազդելու հմտությունների փորձված ձևերը, ինչպես նաև՝ հույզերը կառավարելու հմտություններ ձեռք բերելու օպտիմալ ժամանակահատվածը: Վերապատրաստման մասնակիցները, ներկայացնելով պրակտիկայում արդեն իսկ օրինաչափ դարձած որոշ դեպքեր, կարևորել են փաստաբանի աշխատանքում բանակցություններ վարելու կարողությունները, ինչի շուրջ ծավալվել է գիտագործնական զրույց:

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })